**Հաստատված է**
**ՀՀ բնապահպանության և ընդերքի**
**տեսչական մարմնի կառավարման խորհրդի**
**2024 թվականի նոյեմբերի 29-ի № 15-Լ որոշմամբ**

# ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

## ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կատարողականի գնահատումը կատարվել է հիմք ընդունելով 2014 թվականի դեկտեմբերի 17-ի «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջները և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի «Տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման սկզբունքները, չափորոշիչները և կարգը հաստատելու մասին» N 693-Ն որոշման հիման վրա: Կատարողականի գնահատման մեթոդոլոգիան հաստատվել է ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 21-ի N12-L որոշմամբ:

Տեսչական մարմնի կատարողականի գնահատման չափորոշիչներն են՝

1. նպատակի չափորոշիչներ.
2. գործընթացի չափորոշիչներ.
3. արդյունքի չափորոշիչներ:

## 1. ՆՊԱՏԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

**1. Կատարողականի գնահատման նպատակի չափորոշիչները վերաբերում են բնապահպանության և ընդերքի ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովման վերլուծությանը:**

**1.1) Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը գնահատելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր ոլորտի համար վերլուծել հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ընդհանուր կշռի միջին ցուցանիշը:**

Այն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$L = S_1/S$$

Որտեղ՝

L-ը հաշվարկվող ցուցանիշն է.

$S_1$-ը հաշվետու ժամանակահատվածում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումարն է.

S–ը հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների քանակն է:

Ըստ Տեսչական մարմնի վերահսկողական ոլորտների՝ L ցուցանիշի և ստուգումների քանակի համեմատականը ներկայացված է Աղյուսակ 1-ում.

**Աղյուսակ *1***

| **Ցուցանիշներ** | **Վերահսկողական ոլորտ** | | **Համեմատ.** | **Վերահսկողական ոլորտ** | | **Համեմատ.** |
|---|---|---|---|---|---|---|
| | **բնապահպան. 2024թ. 1-ին եռամսյակ** | **բնապահպան. 2023թ. 1-ին եռամսյակ** | | **ընդերք 2024թ. 1-ին եռամսյակ** | **ընդերք 2023թ.1-ին եռամսյակ** | |
| Իրականացված ստուգումների քանակ՝ **S** | 29 | 28 | ***1*** | 9 | 8 | ***1*** |
| Իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումար՝ $\mathbf{S_1}$ | 244,89 | 250,96 | ***-6,07*** | 110,4 | 224,56 | ***-114,16*** |
| Ցուցանիշը՝ **L** | ***8,44*** | ***8,96*** | ***-0.52*** | ***12,27*** | ***28,07*** | ***15.8*** |

*2024* թվականի *1*-ին եռամսյակում Բնապահպանության և ընդերքի Տեսչական մարմնի կողմից իրականացվել են առանձնահատուկ ստուգումներ՝ առանց համապատասխան ոլորտի և գործունեության տեսակի համար նախատեսված ստուգաթերթերի, որպիսի հանգամանքներում հայտնաբերված խախտումների դեպքում հնարավոր չէ հաշվարկել կշիռ և ստանալ հաշվետու ժամանակահատվածում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումարը *($S_1$)*: Ուստի վերոնշյալ ստուգումների վերաբերյալ տեղեկատվությունը՝ ըստ վերահսկողության ոլորտի, ներկայացվում է Աղյուսակ *1.1*-ում:

**Աղյուսակ *1.1***

| 2024 թվականի 1-ին եռամսյակում առանց ստուգաթերթ իրականացված ստուգումներ | | | |
|---|---|---|---|
| **Վերահսկողական ոլորտ** | **քանակ** | | **Ընդամենը** |
| | **խախտումների հայտնաբերմամբ** | **առանց խախտումների** | |
| բնապահպանություն | 24 | 10 | 34 |
| ընդերք | 4 | | 4 |
| **Ընդամենը** | 28 | **10** | 38 |

Ըստ ստուգվող սուբյեկտների գործունեության ոլորտի՝ L ցուցանիշի և ստուգումների քանակի համեմատականը ներկայացված է Աղյուսակ 2-ում.

**Աղյուսակ 2**

| Գործունեության ոլորտ | 2024թ. 1-ին եռամսյակ՝ ցուցանիշ S1 | 2024թ. 1-ին եռամսյակ ստուգումների քանակ՝S | 2024թ. 1-ին եռամսյակ՝ հաշվարկվող ցուցանիշ L | 2023թ. 1-ին եռամսյակ՝ ցուցանիշ S1 | 2023թ. 1-ին եռամսյակ ստուգումների քանակ՝ S | 2023թ. 1-ին եռամսյակ՝ հաշվարկվող ցուցանիշ L | 2024թ. և 2023թ. 1-ին եռամսյակների ստուգումների քանակի համեմատությունը | 2024թ. և 2023թ. 1-ին եռամսյակների L ցուցանիշի համեմատությունը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 01 Բուսաբուծություն ու անասնաբուծություն, որսորդություն և հարակից ծառայություններ | 20,5 | 4 | 5,13 | | | | 4 | 5,13 |
| 02 Անտառային տնտեսություն և փայտամթերումներ 84 | 6,9 | 1 | 6,9 | | | | 1 | 6,9 |
| 03 Ձկնորսություն և ձկնաբուծություն | 7,3 | 2 | 3,65 | 6,9 | 2 | 3,45 | 0 | 0,2 |
| 07 Մետաղական հանքաքարի արդյունահանում 97 | 9,7 | 1 | 9,7 | | | | 1 | 9,7 |
| 08 Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր | 88,7 | 7 | 12,67 | 138,56 | 5 | 27,71 | 2 | -15,04 |
| 09 Հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն | 12,0 | 1 | 12,0 | 86,0 | 3 | 28,67 | -2 | -16,67 |
| 10 Սննդամթերքի արտադրություն | 29,4 | 2 | 14,7 | 10,0 | 2 | 5,0 | 0 | 9,7 |
| 11 Խմիչքների արտադրություն | 1,0 | 2 | 0,5 | 65,8 | 4 | 16,45 | -2 | -15,95 |
| 16 Փայտանյութի մշակում, փայտից, խցանակեղևից, ծղոտից և հյուսկեն նյութերից արտադրատեսակների արտադրություն, բացի կահույքից | 6,0 | 1 | 6,0 | | | | 1 | 6,0 |
| 17 Թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն | - | 1 | | | | | 1 | 0 |
| 21 Դեղագործական արտադրանքի արտադրություն | 6,0 | 1 | 6,0 | | | | 1 | 6,0 |
| 23 Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն | 9,2 | 2 | 4,6 | | | | 2 | 4,6 |
| 31 Կահույքի արտադրություն | 6,0 | 1 | 6,0 | | | | 1 | 6,0 |
| 33 Մեքենաների և սարքավորումների նորոգում | 5,0 | 1 | 5,0 | | | | 1 | 5,0 |
| 35.11.2 Էլեկտրաէներգիայի արտադրություն հիդրոէլեկտրակայաններում 85 | 5,8 | 2 | 2,9 | 2,5 | 2 | 1,25 | 0 | 1,65 |

| Գործունեության ոլորտ | 2024թ. 1-ին եռամսյակ՝ ցուցանիշ S1 | 2024թ. 1-ին եռամսյակ ստուգումների քանակ՝S | 2024թ. 1-ին եռամսյակ՝ հաշվարկվող ցուցանիշ L | 2023թ. 1-ին եռամսյակ՝ ցուցանիշ S1 | 2023թ. 1-ին եռամսյակ ստուգումների քանակ՝ S | 2023թ. 1-ին եռամսյակ՝ հաշվարկվող ցուցանիշ L | 2024թ. և 2023թ. 1-ին եռամսյակների ստուգումների քանակի համեմատությունն | 2024թ. և 2023թ. 1-ին եռամսյակների L ցուցանիշի համեմատությունն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 38 Թափոնների հավաքում, մշակում և ոչնչացում, նյութերի վերականգնում | 56,28 | 3 | 18,76 | 22,9 | 2 | 11,45 | 1 | 7,31 |
| 41 Շենքերի շինարարություն | | | | 92,86 | 15 | 6,19 | -15 | -6,19 |
| 42 Քաղաքացիական շինարարություն | 7,0 | 1 | 7,0 | 50,0 | 1 | 50,0 | 0 | -43,0 |
| 55 Կացության կազմակերպում | 50,0 | 1 | 50,0 | | | | 1 | 50,0 |
| 56 Հանրային սննդի կազմակերպում | - | 1 | | | | | 1 | 0 |
| 84 Պետության կառավարում և պաշտպանություն. պարտադիր սոցիալական ապահովագրություն | 12,3 | 2 | 6,15 | | | | 2 | 6,15 |
| 86 Առողջապահություն | 16,21 | 1 | 16,21 | | | | 1 | 16,21 |
| **Ընդամենը** | | ***38*** | | | ***36*** | | | |

Այն դեպքում, երբ ստուգումն իրականացվել է ստուգաթերթի ոչ ամբողջական հարցերի շրջանակներում՝ ապա կշիռը հաշվարկվել է ստուգման ընթացքում խախտումներ արձանագրելու համար հիմք հանդիսացած հարցերի պատասխաններից ստացված կշիռների գումարի արժեքը բաժանելով ստուգման հարցերի շրջանակում այդ հարցերի պատասխանների կշիռների գումարի առավելագույն հնարավոր արժեքին և բազմապատկած ստուգաթերթերի առավելագույն կշռի միավորով՝ *50*:

*2024* թվականի *1*-ին եռամսյակում Բնապահպանության և ընդերքի Տեսչական մարմնի կողմից իրականացվել են առանձնահատուկ ստուգումներ՝ առանց համապատասխան ոլորտի և գործունեության տեսակի համար նախատեսված ստուգաթերթերի, որպիսի հանգամանքներում հայտնաբերված խախտումների դեպքում հնարավոր չէ հաշվարկել կշիռ և ստանալ հաշվետու ժամանակահատվածում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումարը *($S_1$)*: Ուստի, այդ ստուգումների վերաբերյալ տեղեկատվությունն ըստ տնտեսվարող սուբյեկտի ծավալած գործունեության ոլորտի՝ ներկայացվում է Աղյուսակ *2.1*-ում:

**Աղյուսակ *2.1***

| 2024 թվականի 1-ին եռամսյակում առանց ստուգաթերթ իրականացված ստուգումների | | | |
|---|---|---|---|
| **Գործունեության ոլորտ** | **քանակ** | | **Ընդամենը** |
| | **խախտումների հայտնաբերմամբ** | **առանց խախտումների** | |
| 01 Բուսաբուծություն ու անասնաբուծություն, որսորդություն և հարակից ծառայություններ | 1 | | 1 |
| 03 Ձկնորսություն և ձկնաբուծություն | 21 | 2 | 23 |
| 08 Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր | 4 | | 4 |
| 23 Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն | 1 | 2 | 3 |
| 55 Կացության կազմակերպում | 1 | | 1 |
| 56 Հանրային սննդի կազմակերպում | | 1 | 1 |
| 86 Առողջապահություն | | 1 | 1 |
| P85.10.0 Նախադպրոցական կրթություն | | 3 | 3 |
| P85.31.2 Միջնակարգ (լրիվ) կրթություն | | 1 | 1 |
| **Ընդամենը** | ***28*** | ***10*** | ***38*** |

**1.2) Ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի կողմից ոլորտի առավել ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ընդհանուր կշիռների միջին ցուցանիշը:**

Այն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$C = S_R/S$$

Որտեղ՝

C-ն ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունն է.

$S_R$–ը հաշվետու ժամանակահատվածում ոլորտի առավել ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների կշիռների հանրագումարն է.

S–ը հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի կողմից ոլորտի առավել ռիսկային բնագավառներում իրականացված ստուգումների քանակն է:

Առավել ռիսկային բնագավառներ են համարվում «Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից իրականացվող՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու» և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1511-ն և 2012 թվականի նոյեմբերի 22-ի N1562-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N1125-Ն որոշման 16-րդ կետի 3-րդ աղյուսակում ընդգրկված 84 և ավելի միավոր ունեցող գործունեության տեսակները:

Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ընդհանուր կշիռների միջին ցուցանիշի հիման վրա ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը ներկայացված է Աղյուսակ 3-ում:

**Աղյուսակ *3***

| Գործունեության ոլորտ | 2024թ. **1-ին** եռամսյակ $S_R$ | 2024թ. **1-ին** եռամսյակ **S** | 2024թ. **1-ին** եռամսյակ **C** | 2023թ. **1-ին** եռամսյակ $S_R$ | 2023թ. **1-ին** եռամսյակ **S** | 2023թ. **1-ին** եռամսյակ **C** | Համեմատություն 2024թ. և 2023թ. **1-ին** եռամսյակներ ի |
|---|---|---|---|---|---|---|---|
| 02 Անտառային տնտեսություն և փայտամթերումներ 84 | 6,9 | 1 | 6,9 | | | | 6,9 |
| 07 Մետաղական հանքաքարի արդյունահանում 97 | 9,7 | 1 | 9,7 | | | | 9,7 |
| 35.11.2 Էլեկտրաէներգիայի արտադրություն հիդրոէլեկտրակայան ներում 85 | 5,8 | 2 | 2,9 | 2,5 | 2 | 1,25 | 1,65 |

**1.3) Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները**.

Չափորոշչի գնահատումը կատարվում է տարին մեկ անգամ:

**1.4) Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները**

Չափորոշիչը գնահատվում է ելնելով խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար Տեսչական մարմնի կողմից մարդկային ռեսուրսների ու ֆինանսական միջոցների հատկացումից, ինչպես նաև փաստացի իրականացված խորհրդատվական, մեթոդական աջակցության և իրազեկման միջոցառումների քանակից և դրանցում մասնակիցների ընդգրկվածությունից:

2024 թվականի հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է իրազեկում-հանդիպում, որի ընթացքում Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարն ու հինգ պաշտոնատար անձանց կողմից Երևան քաղաքում շինաշխատանքներ և հանքարդյունաբերություն իրականացնող 18 տնտեսավարողների, Երևանի քաղաքապետարանի և Կառուցապատողների հայկական ասոցիացիայի ներկայացուցիչների հետ քննարկվել է օդի աղտոտվածությունը նվազեցնող և կանխարգելող հարցեր:

Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար ֆինանսական միջոցներ չեն հատկացվել:

2023 թվականի հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է երկու իրազեկում-հանդիպում, որին մասնակցել են Տեսչական մարմնի ղեկավարը, ղեկավարի տեղակալները, Տեսչական մարմնի ութ աշխատակիցներ և Երևան քաղաքում շինարարական աշխատանքներ իրականացնող տասներեք, Արմավիրի և Արարատի մարզի վարչական տարածքներում Արաքս գետի երկայնքով գործող, ավազի արդյունահանմամբ զբաղվող յոթ, ու՝ քսան կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Իրականացված քննարկման ընթացքում մասնակիցներն իրազեկվել են «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների, լրացումների մասին, և «Ընդերքի մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման վերաբերյալ:

Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար ֆինանսական միջոցներ չեն հատկացվել:

**1.5) Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացված առաջարկների քանակը**

Չափորոշչի գնահատումը կատարվում է կիսամյակը մեկ անգամ:

## 2. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

**Գործընթացի չափորոշիչները վերաբերում են Տեսչական մարմնի գործառույթների իրականացման ընթացքին:**

**2.1) Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը**

Չափորոշիչը գնահատելու համար անհրաժեշտ է հաշվարկել հաշվետու ժամանակահատվածում տարեկան ծրագրով չպլանավորված, սակայն ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընթացքում բուն ստուգման գործընթացի միջին տևողությունը:

Հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

**R = T/N**

որտեղ՝

**R**-ը հաշվարկվող ցուցանիշն է.

**T** –ն ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընթացքում ստուգման գործընթացի ընդհանուր տևողությունն է.

**N** –ը ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակն է:

Արդյունքները ներկայացվում է Աղյուսակ 4-ում:

**Աղյուսակ *4***

| Ցուցանիշներ | *2024թ. 1*-ին եռամսյակ | *2023թ. 1*-ին եռամսյակ | Համեմատ. |
|---|---|---|---|
| Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընթացքում ստուգման գործընթացի ընդհանուր տևողություն՝ **T** (օր) | 744 | 249 | 495 |
| Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակ՝ **N** (հատ) | 62 | 29 | 33 |
| Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընթացքում բուն ստուգման գործընթացի միջին տևողություն՝ **R** (օր) | 12 | 8.59 | 3.41 |

**2.2) Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ:**

Չափորոշչի գնահատման համար անհրաժեշտ է հաշվարկել բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում հաշվետու ժամանակահատվածում կատարված ստուգումների քանակի հարաբերությունը Տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և նույն ժամանակահատվածում իրականացված ստուգումների ընդհանուր քանակին:

Հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$R = N_2/N_1$$

որտեղ՝

**R**-ը հաշվարկվող ցուցանիշն է.

$N_2$–ը բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակն է.

$N_1$ –ը ստուգումների տարեկան ծրագրով հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված և իրականացված ստուգումների ընդհանուր քանակն է:

Արդյունքները ներկայացվում է աղյուսակ 5-ում:

**Աղյուսակ *5***

| Ցուցանիշներ | *2024թ. 1-ին* եռամսյակ | *2023թ. 1-ին* եռամսյակ | Համեմատ. |
|---|---|---|---|
| Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում իրականացված ստուգումների քանակը՝ $N_2$ | 63 | 17 | 46 |
| Ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների քանակ՝ $N_1$ | 12 | 7 | 5 |
| Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում իրականացված ստուգումների և ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների քանակային հարաբերությունը՝ **R** | 5.25 | 2.43 | 2.82 |

Աղյուսակ 5.1-ում ներկայացնում ենք նաև ստուգումների ընդհանուր քանակի և բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում իրականացված ստուգումների քանակի տոկոսային հարաբերակցությունը:

**Աղյուսակ *5.1***

| Ցուցանիշներ | *2024թ. 1-ին* եռամսյակ | *2023թ. 1-ին* եռամսյակ | Համեմատ. |
|---|---|---|---|
| Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում իրականացված ստուգումների քանակը | 63 | 17 | 46 |
| Ստուգումների ընդհանուր քանակ | 76 | 36 | 40 |
| Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում իրականացված ստուգումների քանակի և իրականացված ստուգումների ընդհանուր քանակի տոկոսային հարաբերությունը (%) | 82,89 | 47,22 | 35,67 |

**2.3) Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունը** հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$A = T/N$$

որտեղ՝

**A-ն** ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունն է.

**T**–ն ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների ընդհանուր տևողությունն է.

**N**–ը ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների քանակն է:

Արդյունքները ներկայացված են Աղյուսակ 6-ում:

**Աղյուսակ *6***

| Ցուցանիշներ | *2024թ. 1*-ին եռամսյակ | *2023թ.1*-ին եռամսյակ | Համեմատ. |
|---|---|---|---|
| Ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների ընդհանուր տևողություն՝ **T** (օր) | 150 | 62 | 88 |
| Ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների քանակ՝ **N** (հատ) | 14 | 7 | 7 |
| Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողություն՝ **A** (օր) | 10.71 | 8.86 | 1.85 |

**2.4) Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակի (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) հարաբերակցությունը[1] ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակին.**

Հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$R = N_2/N_1$$

որտեղ՝

**R**-ը հաշվարկվող ցուցանիշն է.

$N_2$–ը ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակն է, (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ).

$N_1$ –ը ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակն է:

**[1]-** Էական վնաս են համարվել այն դեպքերը, երբ ստուգման ընթացքում խախտումներ արձանագրելու համար հիմք հանդիսացած հարցերի պատասխաններից ստացված կշիռների գումարի արժեքը կազմել է ստուգման ենթակա հարցերի կշիռների գումարի 70 և ավելի տոկոսը:

Արդյունքները ներկայացվում է Աղյուսակ 7-ում:

**Աղյուսակ 7**

| Ցուցանիշներ | *2024թ. 1*-ին եռամսյակ | *2023թ. 1*-ին եռամսյակ | Համեմատ. |
|---|---|---|---|
| **[illegible]աժեշտության իրականացված** | 62 | 29 | 33 |

| | | | |
|---|---|---|---|
| **ստուգումների քանակ ($N_1$), այդ թվում՝** | | | |
| - կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ *($N_2$)* | 2 | 5 | **-3** |
| **R ցուցանիշ** | **0,03** | **0,17** | **-0,14** |

7-րդ աղյուսակի առաջին տողում ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակի մեջ ներառված են առանձնահատուկ ստուգումների քանակը *($N_1$)*, իսկ երկրորդ տողում՝ ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակն է, *(*որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ *($N_2$))*, քանի որ Տեսչական մարմնի կողմից առանձնահատուկ ստուգումներն իրականացվել են առանց համապատասխան ոլորտի և գործունեության տեսակի համար նախատեսված ստուգաթերթերի, որպիսի հանգամանքներում հայտնաբերված խախտումների դեպքում հնարավոր չէ հաշվարկել կշիռը և ռիսկը, հետևաբար առանձնահատուկ ստուգումները $N_2$ ցուցանիշի մեջ ներառված չէն, որովհետև պարզ չի նշված ստուգումների շնորհիվ կանխվել է՞ արդյոք հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնասը կամ ռիսկը:

**2.5) Ստուգման ենթարկված օբյեկտների բավարարվածության աստիճանը Տեսչական մարմնի աշխատանքների անաչառությունից, ընթացակարգերի թափանցիկությունից, տեղեկատվության որակից և Տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժությունից.**

Չափորոշչի գնահատումը կատարվում է ելնելով Տեսչական մարմնի աշխատանքների անաչառության, ընթացակարգերի թափանցիկության, տեղեկատվության որակի և Տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժության վերաբերյալ ստացված դիմում-բողոքների քանակից:

Եթե առկա է բողոք (դատական կամ վարչական), ապա նշանակում է, որ տնտեսավարողը բավարարված չէ Տեսչական մարմնի աշխատանքների անաչառությունից, և/կամ տեղեկատվության որակից, և/կամ ընթացակարգերի թափանցիկությունից, և/կամ Տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժությունից:

2024 թվականի 1-ին եռամսյակում ստացվել է 64 հատ դիմում բողոք:

2023 թվականի 1-ին եռամսյակում ստացվել է 29 հատ դիմում բողոք:

**Բողոքների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Աղյուսակ 10-ում**:

## 3. ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

**Արդյունքի չափորոշիչները վերաբերում են Տեսչական մարմնի կոնկրետ լիազորության իրականացման անմիջական արդյունքին.**

**3.1) Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերակցությունը**

Գնահատումը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$R = N_2/N_1$$

որտեղ՝

[illegible]ոկվող ցուցանիշն է.

$N_2$–ը ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակն է.
$N_1$–ը ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների ընդհանուր քանակն է:
Արդյունքները ներկայացվում է Աղյուսակ 8-ում:

**Աղյուսակ *8***

| Ցուցանիշներ | *2024թ. 1-ին* եռամսյակ | *2023թ. 1-ին* եռամսյակ | Համեմատ. |
|---|---|---|---|
| Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակ՝ $N_2$ | 62 | 29 | 33 |
| Ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և իրականացված ստուգումների ընդհանուր քանակ՝ $N_1$ | 14 | 7 | 7 |
| Ըստ անհրաժեշտության իրականացված և ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների քանակական հարաբերակցություն՝ **R** | 4.43 | 4.14 | 0.29 |

**3.2) Տեսչական մարմնի վերահսկման երեքից հինգ բարձր ռիսկային բնագավառներում իրավիճակի փոփոխությունը**.

Չափորոշչի գնահատումը կատարվում է տարեկան մեկ անգամ:

**3.3) Ըստ առանձին ստուգման հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները.**

Հաշվարկները կատարվել են հասանելի տեղեկատվության հիման վրա: Ֆինանսական միջոցների միջին ցուցանիշը ստանալու համար հիմք է ընդունվել ստուգումների համար հատկացված գործուղման ծախսերի և ստուգումների քանակի քանորդը:
Արդյունքները ներկայացվում են Աղյուսակ 9-ում:

**Աղյուսակ *9***

| Ցուցանիշներ | *2024թ. 1-ին* եռամսյակ | *2023թ. 1-ին* եռամսյակ | Համեմատ. |
|---|---|---|---|
| **Մեկ ստուգման համար ծախսված ֆինանսական միջոցների միջին ցուցանիշ (գործուղումներ)** | 91 271,05 | 56 902, 78 | 34 368,27 |
| **Մեկ ստուգմանը մասնակցած մարդկային ռեսուրսների միջին ցուցանիշ** | 2,84 | 3,08 | -0,24 |
| **Ստուգումների քանակ** | ***76*** | ***36*** | ***40*** |

***2024* թվականի *1*-ին եռամսյակում** վառելիքի ծախսը կազմել է 13 755 լիտր բենզին, որից գործուղման համար ծախսվել է 11 015 լիտր բենզին, դիզելային վառելիք՝ 120 լիտր: Գործուղման համար հատկացված ֆինանսական միջոցները՝ **11 095 200** դրամ (ըստ ՀՀ վարչապետի աշխատակազմի ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության կողմից ստացված տեղեկատվության):

**3.4) Տեսչական մարմնի, Տեսչական մարմնի աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքների քանակը և դրանց արդյունքները**

Չափորոշիչը գնահատվում է վերլուծելով հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի, նրա աշխատակիցների գործողությունների կամ անգործության կամ նրա կողմից ընդունված վարչական ակտերի դեմ բերված բողոքների քանակը և դրանց վերաբերյալ ընդունված որոշումները:

Չափորոշիչը գնահատվում է ստացված բողոքների քանակի և իրականացված ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ:

Վերը նշված չափորոշչի գնահատման համար ելակետային տվյալները ներկայացվում է Աղյուսակ 10-ում:

**Աղյուսակ *10***

| *N* | Ցուցանիշներ | *2024թ. 1-ին եռամսյակ* | *2023թ. 1-ին եռամսյակ* | Համեմատ. |
|---|---|---|---|---|
| **1** | **Տեսչական մարմնի դեմ բերված բողոքների քանակ, այդ թվում՝** | ***64*** | ***29*** | ***35*** |
| *1.1* | - դատական կարգով | 55 | 17 | ***38*** |
| *1.2* | - վերադասության կարգով | 9 | 12 | ***-3*** |
| **2** | **Դատական կարգով բողոքների արդյունքում ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող որոշումների քանակ, այդ թվում՝** | ***7*** | ***0*** | ***7*** |
| *2.1* | - բավարարված *(այդ թվում՝ մասնակի)* | 3 | 0 | ***3*** |
| *2.2* | - մերժված | 3 | 0 | ***3*** |
| *2.3* | - այլ *(կարճված, հաշտության համաձայնություն և այլն)* | 1 | 0 | ***1*** |
| **3** | **Դատական կարգով բողոքների արդյունքում ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող բավարարված (այդ թվում՝ մասնակի) որոշումների քանակը, որոնք նախկինում վերադասության կարգով բողոքարկվել և մերժվել են կամ թողնվել են առանց քննության** | ***1*** | ***0*** | ***1*** |
| **4** | **Վերադասության կարգով բողոքների արդյունքում ընդունված որոշումների քանակ, այդ թվում՝** | ***10*** | ***10*** | ***0*** |
| *4.1* | -բավարարված *(այդ թվում՝ մասնակի)* | ***1*** | ***1*** | ***0*** |
| *4.2* | - մերժված | ***6*** | ***5*** | ***1*** |
| *4.3* | - առանց քննության թողնված | ***3*** | ***4*** | ***-1*** |
| **5** | **Ստուգումների քանակ** | ***76*** | ***36*** | ***40*** |

Տեսչական մարմնի կատարողականի գնահատման արդյունքում հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ Որակի ապահովման վարչությունը առաջարկությունները ներկայացնում է ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության եռամսյակային հաշվետվություններում: